# ՄԷՃՄՈՒԱՅԷ
# ՀԱՎԱՏԻՍ

ՌՈՒՄՈՒՐՈՒ ՍԻԵԱՍԻՅԷ ՊԷԼԷՏԻՅԷ ՎԷ ԻԼՄԻՅԷ ՎԷ ՄԷՎԱՏԸ ՆԱՖԻԱՅԸ ՍԱՅԻՐԷՅԷ

ՄԻԻԹԱԱԼԻԳ ԿԱԶԷԹԱ

Ֆի 30 փարա

ՍԷՆԷ 24 ١٢٩٢ ՐԷՃԷՊ ١٠ | 1876 ՑՈՒԼԻՍ 19 ԲԱԶԱՐ ԷՐԹԷՍԻ | ԱԼԱՖՐԱՆԿԱ ՑՈՒԼԻՍ 31 ՆՈՒՄԷՐՕ 1651


## ԻԽԹԻԱՐԸ ՄԱԽՍՈՒՍ

Ճումաա կիւնիւ Խըալէեւի մախսուսէ իլէ Գաֆգասիէյէ տայիր նէշր իլթիմիւզ Հավատիսին սըրֆ եալըն օյտուղունու պէեան իտէրիզ ։

—

Պունու տայիր, Պապը Աւլիւէն րէսմէն մալումաթ վէ րուխսաթ ալմաըդճա եազամաեաճաղըզ ։

## ԴԱՇՆԱԳՐՈՒԹԻՒՆ
## Ի ՄԷՋ ԵՐԿՈՒՑ ԱԶԳԱՑ
## ՌՈՒՍԱՑ ԵՒ ՀԱՅՈՑ

Ցօղուած Ա. Նախքան զամենայն հաստատել զսէր և զմիաբանութիւնն ի մէջ երկուց ազգացս` ըստ այնմ "դուք ամենեքին եղբարք էք„, որք ի մէջ իւրեանց չունիցին ամենեւին խըտրութիւն օրինաց ո՛չ Ռուսաց առ հաւատս և յեկեղեցիս մեր, և ո՛չ մեր առ նոսա զի ի Քրիստոս ոչ այլ ինչ է եթէ ոչ հաւատ սիրով յաջորդեալ (Գաղատացւոց 7 գլուխ 6 համար), այլ համաբիլ զմիմեանս միոյ և նոյնոյ հաւատոյ և եկեղեցւոյ ծնունդ հիմնեալ ի վերայ փրկչական բանի թէ "այսու ծանիցեն զձեզ թէ իմ աշակերտ էք, թէ զմիմեանս սիրեցէք„ ։ վասնորոյ և համարձակեալ և մուտ առնել յեկեղեցիս իւրերաց, որպէս զի մի՛ մնասցէ նիւթ խռովութեան. վասն զի միապէս դաւանեմք զպաշտելի Սուրբ Երրորդութիւն և մարդեղութիւն բանին Աստուծոյ` Աստուած և մարդ կատարեալ, և վասն մեր չարչարեալ, զոր ի Հաւատամքի պաշտի և ի նոցանէ և ի մէնջ, որ հիմն քրիստոնէական ազգաց են ի վերայ կարծեցեալ գաղտողութեան մարդկան ։

Բ. Զհետաեալս յիւրաքանչիւր ազգացս չընկալնուլ ի հաղորդութիւն երբ զպղտորիչս և զխռովարարս սիրոյ և խաղաղութեան ։

Գ. Ի հաւատս գալ ոմանց տաճկաց և հեթանոսաց, որ ազգի կրօն կամիցին ըմբռնել` նա նոքաւ մկրտել, դարց գայթակղութեան արգելման լիցին ըստ հաճոյից նոցա որպէս մի և նոյն քրիստոնէական օրինաց պաշտօնէի ։

Դ. Կապակցութիւն երկուց թագաւորութեանց մեծ դաշամբ յաւիտենականաւ ։

Ե. Լինիցին ի Հայաստան չափաւոր զօրք Ռուսաց երանալաւ միով յազգին պահպանութիւն և երկիւղի այլ թագաւորաց` Պարսից և Օսմանցւոց, և ի ժառանգաց թագաւորութեան մինն դընիցի ի գրունս կայսեր ։

Զ. Հպարտութիւն մեր այնպէս եղիցի որպէս լինիւր երբեմն Յունաց և Պարսից տալով ի յարքունիս հարկացն և ի հանքաց ոսկւոյ և արծաթոյ, և ի ժամանակի պատերազմի յօգնութիւն մեմեանց հասանեն որքան և հարկն պահանջեսցէ ։

Է. Մինչ ամենողորմած և օգոստափառ կայսերուհին կամի օգնութիւն առնել տարաբախտ աշխարհի մերոյ և կործանեալ թագն նորոգել, ընտրութիւն թագաւորին մերոյ կախեալ լինիցի ի կամաց նորա միայն, եթէ յազգէ մերմէ և եթէ դրան իւրոյ հաւատարմաց ։

Ը. Որ ոք թագաւոր կացուսցի լինիցի հայոյ օրինօք և ի Վաղարշապատ թագաւորական քաղաքն ի սուրբ Էջմիածին օծանիցի որպէս նախնի թագաւորքն մեր ։

Թ. Զթագաւորական քաղաքն պատրաստեալ 'ի Վաղարշապատ կամ յԱնի թագաւորական քաղաքն կամ յայլ պատշաճաւոր տեղի յԱյրարատ գաւառի ։

Ժ. Սահմանեալ կաւալերն (1) (օրան նշան) լինել տապան նոյի, և Լենտն երեք գոյն կարմիր, կանաչ և կապոյտ ըստ գունոյն աղեղան որ զկնի ջրհեղեղին տըւաւ Աստուած նոյի ի նշան հաշտութեան ։

ԺԱ. Եթէ հաստատեսցի և այլ կաւալեր լինիցի յանուն Ս. Լուսաւորչին օրտն պատկեր նորա և որպէս հաճոյ լինիցի ։

ԺԲ. Հաստատեսցի և առաջին նշան մեր Դաստաւակի Քրիստոսի, զոր և առաքեաց առ Աբգար թագաւորն մեր, տացի այն յաղթանակողացն միայն կարմիր լենտիւ ։

ԺԳ. Ցարմարեսցի կնիք թագաւորական ըստ սովորութեան առաջնոց թագաւորացն մերոց Արշակունեաց արծիւն միագլխի, որ նախքան զքրիստոնէութիւնն` դառն ի ժամանակի քրիստոնէութեան և երկու առիւծն ի փոքր Հայաստան և նոքօք զարդարեսցին հանդերձ թագաւորաց մերոց դրօշակքն և դրամքն ։

ԺԴ. Ցազգէ առաջնոյ նախարարացն մերոց և իշխանաց յայտնեսցի ոք որքան հայրենիք ունեցեալ իցէ, որ վկայութեամբ հաստատեսցէ վերադարձուցեալ եղիցի առ նա և պատիւ նախագահութեան ազգին պահպանեսցի ։

ԺԵ. Ի նորոգել իշխանութեան մերոյ մի լինիցին ծառայք իշխանաց (ստրուկք) որք կարիցեն զմի մի վաճառել 'ի նոցանէ, այլ լինիցին այնպէս որպէս յառաջ եղեալ են 'ի ժամանակս թագաւորաց մերոց և Օսմանցւոց և Պարսից, որք թագաւորին են միայն ծառայք, և երբ թագաւորն կամիցի ուրուք իշխանի շնորհ ինչ առնել զգիւղ ինչ բնակչաւն շընորհեսցէ նմա, բայց շնորհընկալ իշխանն կարողէ զգիւղն ընդ բընակչաց 'ի միասին ծախել, և ոչ թէ բնակիչսն, այլ գիւղն ընդ մըքոյն այսինքն ընդ հողոյն և ջըրոյն, զոր գործեն մարդիկք, Ցոյնք յորժամ տիրեցին մեզ զկնի անկման թագաւորութեան Արշակունեաց` կամեցան զմեզ սեփական ծառայ իշխանաց իւրեանց առնել. սակայն ազգ մեր ոչ հաճեցաւ առ նոսա, այլ մտին ընդ իշխանութեամբ Բագրատունի խալֆային զի ազատ մնասցեն ։

ԺԶ. Ցաղագս վաճառականութեան սահմանեսցի օրէնք 'ի մէջ երկուց թագաւորացս և յատկացուսցի մաքս իւրաքանչիւր վաճառելի իրաց և տացի մեզ նաւահանգիստն 'ի կասպիական ծովուն ։

ԺԷ. Փախուցեալ զինուորաց և հպատակաց սահմանել օրէնք, և վասն որպիսաբար ընդունելոյ և Ռուսաց իշխանս, զավնիւս և ըզպատուաւոր անձինս ազգի մերում ։

ԺԸ. Ընտրութիւն Հայրապետին մերոյ լինիցի առաջարկութեամբ թագաւորին մերոյ. որպէս յայնմ ընտրի 'ի բոլոր ազգէն (1) ։ Որովհետեւ պայծառափայլ Գրիգոր Ալէքսանդրիչ Պոտեմկինն է յատուկ խնամակալ ազգի մերում, որ ըստ հաճութեան ամենողորմած կայսերուհւոյն է կառավարիչ գործոյս այսմիկ. և ազգի մերում յատուկ խնամակալ և բարերար, զոր ինչ նա տնօրինեսցէ, զի շնորհ ողորմութեան մարդասէր կայսերուհւոյն, նորին միջնորդութեամբ յառաջանայ, որպէս յաթոռոյ Աստուածութեան 'ի հրեշտակաց առ մարդիկ ։

Զայս գրեցաւ 'ի կողմանէ Հայոց եւ 'ի ձեռն Յովսէփ արքեպիսկոպոսի մատուցաւ կայսերուհւոյն. յիշատակի 'ի մերում անծանօթ նամակի. թէ Գրիգոր Ալէքսանդրիչ Պոտէմկինն ջանայր ըստ ամենայնի 'ի գլուխ տանել զայս գործ, եւ յորդորէր միշտ զկայսերուհին զինքն կացուցանել թագաւոր 'ի վերայ Հայոց. յաղագս որոյ հրամանաւ

---

(1) Կաւալերկամ օրտն է անուն առհասարակ թագաւորական նշանի 'ի լեզու Ռուսաց, որով պնակեն թագաւորք զզօրականս 'ի յաղթանակի ։

(1) Թուի թէ ի սմանէ առեալ է զկանոնն, զոր վասն ընտրութեան կաթողիկոսի գրեալ է 'ի բարձրագոյն կարգադրութեան որ վասն լուսաւորութեան Հայոց եկեղեցւոյ կայսրն Ռուսաց ի 11 մարտի 1836 ամի ։

